



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱԾ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՐԵՒՄՏԵԱՆ ՈՒՂՈԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾՐՁԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու՝ Ղըպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. Առաքելական Եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեցաբթի, 30 Յունիսին ունեցան իրենց հերթական հանդիպումը, օրակարգի վրայ ունենալով միացեալ ծրագիրներ ու գործակցութեան նախագիծեր:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ղըպտիներու Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Նորթիճ, հիւրընկալութեամբ Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Սրապիոն Եպիսկոպոսին:

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ասորի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. S. Եուճին Զափլան Արքեպիսկոպոս, Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. S. Յովսան Արք. Տերտերեան, եւ հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան, իւրաքանչիւրը երգելով ու աղօթելով իր լեզուով:

Առաջնորդ Սրբազան Յօր կ'ընկերանային Թրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակի գոյգ Վարիչները՝ Գերպ. S. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգժ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Ժողովը գեկուցում լսեց Երեք Եկեղեցիներու Երիտասարդական խմբակներու համագումարի մասին, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 20 Յունի 2009-ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ յարկին տակ, հովանաւորութեամբ խորհուրդի անդամ Երեք Եկեղեցիներու թեմակալ Առաջնորդներուն: Նաեւ գեկուցուեցաւ Կիրակնօրեայ դպրոցներու ապագայ ծրագրին մասին, որով յառաջիկայ Նոյեմբեր 21-ին տեղի պիտի ունենայ միջ-համայնքային Կիրակնօրեայ Վարժարաններու միօրեայ հաւաք, Ասորիներու Ս. Եփրեմ Առաջնորդարանիստ Մայր Տաճարին մէջ, Պըրպէնք:

Ժողովը նաեւ որոշեց յաւելեալ մղում տալ Երիտասարդական խմբակներու գործունեութեան:

Որոշուեցաւ այս տարի եւս կատարել համատեղ Ս. Պատարագ, որ տեղի պիտի ունենայ Ղըպտի Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, յառաջիկայ Սեպտեմբեր 24-ին:

Ժողովական աշխատանքներու աւարտին տեղի ունեցաւ սիրոյ սեղան, որմէ Ետք՝ յիշատակի նկար մը առնուեցաւ:

## **PRELATE PARTICIPATES IN MEETING OF COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS**

On Tuesday, June 30<sup>th</sup>, 2009, the meeting of the Council of Oriental Orthodox Bishops took place at St. Mary and St. Athanasius Coptic Church in Northridge, hosted by H.G. Bishop Serapion.

Participating in the meeting were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop Serapion, and clergy members. The Prelate was accompanied by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

The day began with morning prayers led by the spiritual leaders in their respective languages.

During the meeting, a report was given on the youth gathering which had taken place on Saturday, June 20<sup>th</sup>, at St. Gregory Armenian Apostolic Church in Pasadena under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops, as well as on the next Sunday School gathering which till take place on November 21<sup>st</sup> which will take place at the Syriac Church Diocese in Burbank.

The Council discussed the strengthening of the youth group and the annual joint clergy conference which will be hosted by the Coptic Church on September 24<sup>th</sup>.

At the conclusion of the meeting, the spiritual leaders and clergy were hosted to a reception.